Հավելված
«Հայաստանի Հանրապետության փաստաբանական
դպրոց» հիմնադրամի կառավարման խորհրդի
թիվ 10 արձանագրության
(Փոփ. 08.08.2013թ. N 14)

Կ Ա Ր Գ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ

(Փոփ. 22.02.2013թ. N 10)

I. Ընդհանուր դրույթներ

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի **(այսուհետև՝ ՀՀ փաստաբանական դպրոց)** ընդունելության քննության կազմակերպման և հանձնման սույն կարգը **(այսուհետև՝ Կարգ)** կարգավորում է ՀՀ փաստաբանական դպրոց ընդունվելու համար դիմում ներկայացրած անձանց **(այսուհետև՝ Դիմորդ),** հավակնորդների **(այսուհետև՝ Հավակնորդներ)** ընդունելության քննության կազմակերպման, հանձնման, բողոքարկման ընթացակարգերը:
(Փոփ. 22.02.2013թ. N 10), (Փոփ. 08.08.2013թ. N 14)

2. ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության համար դիմումների ներկայացման, ստուգման, ստուգումների արդյունքներն ամփոփելու և քննության անցկացման ժամկետները սահմանվում են ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննության հանձնաժողովի **(այսուհետև՝ Հանձնաժողով)** կողմից սահմանված ժամանակացույցով **(այսուհետև՝ Ժամանակացույց)**:
(Փոփ. 08.08.2013թ. N 14)

3. Կարգը պարտադիր է ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի **(այսուհետև՝ Խորհուրդ),** Խորհրդի անդամների, ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի, Հանձնաժողովի, Հավակնորդների, Դիմորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակազմի անդամների և տեխնիկական անձնակազմի համար:
(Փոփ. 08.08.2013թ. N 14)

4. ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննության **(այսուհետև՝ Ընդունելության քննություն)** անցկացման, ինչպես նաև Կարգի հետ կապված այլ հարցերի վերաբերյալ նամակագրությունը Դիմորդների, Հավակնորդների հետ իրականացվում է առձեռն կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ Դիմորդի, Հավակնորդի՝ Ընդունելության քննության դիմումի մեջ նշված էլեկտրոնային հասցեին ուղարկելու եղանակով:
(Փոփ. 08.08.2013թ. N 14), (Փոփ. 27.08.2013թ. N 15)

4.1 Կարգով նախատեսված գրավոր փաստաթղթերը կհամարվեն պատշաճ ուղարկված Դիմորդի, Հավակնորդի՝ Ընդունելության քննության դիմումի մեջ նշած էլեկտրոնային հասցեին ՀՀ փաստաբանական դպրոցի ուղարկելու պահից: Եթե Հավակնորդները, Ունկնդիրները չեն ստացել էլեկտրոնային տարբերակով ուղարկված փաստաթղթերը, ապա պարտավոր են ողջամիտ ժամկետում ներկայանալ ՀՀ փաստաբանական դպրոց և առձեռն ստանալ համապատասխան փաստաթղթերը, չներկայանելու դեպքում՝ դրա հետ

կապված բացասական հետևանքները կրում են Դիմորդները, Հավակնորդները, Ունկնդիրները:

(Լր. 27.08.2013թ. N 15)

II. Ընդունելության հանձնաժողովը

5. Կարգին համապատասխան Ընդունելության քննությունը կազմակերպելու և անցկացնելու նպատակով ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի որոշմամբ ձևավորվում է Հանձնաժողով:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

6. Հանձնաժողովը ձևավորվում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենից և իր կողմից նշանակված երեք անդամից: Հանձնաժողովի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

7. Հանձնաժողովի լիազորությունները սահմանվում են Կարգով:

8. Հանձնաժողովը լիազորված է՝

1) ընդունել դիմումներ և այլ փաստաթղթեր,

2) կազմակերպել Դիմորդների դիմումների գրանցումը,

3) ստուգել Դիմորդների կողմից ներկայացրած դիմումների և փաստաթղթերի իսկությունը,

4) կատարել հարցումներ՝ ներկայացված փաստաթղթերի իսկությունը պարզելու նպատակով,

4.1) ընդունել որոշումներ,

5) վերահսկել Ընդունելության քննությունը,

6) ամփոփել Ընդունելության քննության արդյունքները,

7) կատարել Կարգին համապատասխան այլ գործողություններ:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

III. Դիտորդական առաքելություն

9. Ընդունելության քննության թափանցիկությունն ապահովելու նպատակով Հանձնաժողովը կարող է ներգրավել Դիտորդների:

(Փոփ. 27.08.2013թ. N 15)

10. Որպես Դիտորդ կարող են ներգրավվել պետական, միջազգային, ինչպես նաև շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի, ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի անդամները, ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրները:

(Լր. 22.02.2013թ. N 10), (Փոփ. 08.08.2013թ. N 14)

11. Կարգի 10-րդ կետում նշված կազմակերպությունները դիտորդական առաքելություն իրականացնում են ներկայացնելով դիմումներ Հանձնաժողովի նախագահին՝ նշելով իրենց ներկայացուցիչների՝ անունը, հայրանունը, ազգանունը և անձնագրային տվյալները:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

12. Դիտորդի կարգավիճակը հավաստելու համար վերջինիս տրվում է Հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և ՀՀ փաստաբանական դպրոցի կնիքով վավերացված անվանաքարտ:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

13. ՀՀ փաստաբանական դպրոցը վարձատրում է Դիտորդին իր առաքելությունն իրականացնելու համար:

(Փոփ. 08.08.2013թ. N 14), (Փոփ. 25.09.2013թ. N 17)

14. Դիտորդի կարգավիճակ ստանձնած անձն իրավունք ունի՝

1) ներկա գտնվել Ընդունելության քննությանը և արդյունքների ամփոփմանը,
2) Հանձնաժողովի նախագահին բանավոր կամ գրավոր ներկայացնել իր դիտողությունները և (կամ) առաջարկությունները Ընդունելության քննության հետ կապված ցանկացած հարցի վերաբերյալ,
3) անարգել ծանոթանալ Հանձնաժողովի տնօրինության ներքո գտնվող փաստաթղթերին և Ընդունելության քննության հետ կապված Խորհրդի որոշումներին,
4) կատարել Կարգով նախատեսված այլ գործողություններ:

15. ՀՀ փաստաբանական դպրոցը երաշխավորում է Դիտորդի՝ Կարգով նախատեսված իրավունքների ապահովումը:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

16. Դիտորդն ունի Կարգով սահմանված պարտականություններ:

17. Դիտորդի կողմից Կարգի խախտման դեպքում Հանձնաժողովը իրավասու է համապատասխան Դիտորդին զրկել դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից, որի մասին ընդունվում է արձանագրային որոշում:

18. Հանձնաժողովը, ստանալով Դիտորդի կողմից բանավոր կամ գրավոր բողոքը (պահանջը), պարտավոր է՝

1) բավարարել դիտորդի բողոքը (պահանջը), կամ
2) մերժել Դիտորդի բողոքը (պահանջը)՝ ողջամիտ ժամկետում տրամադրելով արձանագրային որոշման քաղվածքը:

IV. Հավակնորդը

19. ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիր (հավակնորդ), բացառությամբ Կարգի 19.1 կետով նախատեսված դեպքի, կարող է լինել այն գործունակ ֆիզիկական անձը, ով Հայաստանի Հանրապետությունում ստացել է իրավագիտության բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան է ձեռք բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումն իրականացվել է օրենքով սահմանված կարգով:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

19.1 ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիր (հավակնորդ) չի կարող լինել այն անձը, ով դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

20. Կարգին համապատասխան բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան ունեցող համարվում են այն անձինք, ովքեր իրենց ավարտական դիպլոմները ստացել են Հայաստանի Հանրապետությունում գործող բուհերից կամ նմանատիպ աստիճան ձեռք են բերել օտարերկրյա պետությունում և այդ ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ճանաչման և համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով:

20.1 Եթե Դիմորդը (Հավակնորդը, Ունկնդիրը) բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճանը ձեռք է բերել օտարերկրյա պետությունում, ապա պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ փաստաբանական դպրոց ներկայացնել Հայաստանի Հանրապետության կողմից այդ ավարտական փաստաթղթի (դիպլոմի) ճանաչման և համարժեքության հաստատումը:

(Լր. 27.08.2013թ. N 15)

21. Դիմորդի, Հավակնորդի նկատմամբ ցանկացած խտրականություն՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

22. Հանձնաժողովը հաշմանդամ Հավակնորդին ապահովում է հատուկ հարմարություն, եթե նման պահանջի մասին Ընդունելության քննության մասնակցության դիմումում նշվել է: Արգելվում է հատուկ հարմարությունների տրամադրումը մերժել՝ պայմանավորելով նման հարմարության բացակայությամբ:

V. Դիմում ներկայացնելը, ներկայացված փաստաթղթերի ստուգումը և արդյունքներն ամփոփումը

23. Ընդունելության քննությանը մասնակցելու համար Ժամանակացույցում նշված ժամկետում Դիմորդը Հանձնաժողովին է հանձնում առձեռն կամ փոստով՝ հետադարձ ծանուցմամբ Հանձնաժողովի կողմից սահմանված ձևի լրացրած և ստորագրած դիմումը, ինքնակենսագրական տվյալներ պարունակող թերթիկը և դրան կից հետևյալ փաստաթղթերը՝

1) իրավաբանական կրթության բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան ունենալու փաստը հաստատող փաստաթղթի (դիպլոմի) պատճենը կամ տեղեկանք բուհից, սակայն ոչ ուշ, քան Ընդունելության քննությունից հինգ օր առաջ ներկայացնելով իրավաբանական կրթության բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան ունենալու փաստը հաստատող փաստաթղթի (դիպլոմի) պատճենը,
2) անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի կամ փախստականի վկայականի) պատճենը,
3) 3 x 4 չափսի 3 (երեք) լուսանկար՝ սովորական չևաչափով, գունավոր, վերջին մեկ տարվա վաղեմության, ինչպես նաև մեկ լուսանկար՝ “JPEG” ձևաչափով, գունավոր, վերջին մեկ տարվա վաղեմության, ընդ որում՝ “JPEG” ձևաչափով լուսանկարը Դիմորդը

կարող է հանձնել ցանկացած ձևով (էլեկտրոնային կրիչ, (սկավառակ), էլեկտրոնային փոստ և այլն)

(Լր. 22.02.2013թ. N 10), (Փոփ. 25.09.2013թ. N 17)

4) Ընդունելության քննությանը մասնակցության վճարի անդորրագրի պատճենը՝ բացառությամբ Կարգի 54-րդ կետով նախատեսված դեպքի:
Սույն կետում նշված փաստաթղթերի պատճենները ներկայացնելու հետ միաժամանակ ներկայացվում են նաև բնօրինակները, որոնք Հանձնաժողովի անդամը դրանց պատճենների հետ համեմատելուց հետո վերադարձնում է Դիմորդին:

23.1 Չի թույլատրվում ներակայացնել հատուկ համազգեստով լուսանկար (օրինակ՝ զինվորական, ոստիկանական համազգեստով և այլն):

(Լր. 08.08.2013թ. N 14)

24. Եթե դիմումը և կից փաստաթղթերն ուղարկվել են փոստով, ապա ուղարկման փոստային դրոշմակնիքը պետք է լինի ոչ ուշ, քան դիմումների ընդունման համար նշված վերջնաժամկետի օրը: Սույն կետում նշված փաստաթղթերի բնօրինակները Դիմորդը պետք է ներկայացնի ոչ ուշ քան Ընդունելության քննությունից մեկ օր առաջ, որոնք Հանձնաժողովի անդամը դրանց պատճենների հետ համեմատելուց հետո վերադարձնում է Դիմորդին:

25. Հանձնաժողովի անդամը համապատասխան մատյանում գրանցում է Դիմորդի կողմից ներկայացրած կամ ուղարկած դիմումն անկախ այդ դիմումի բովանդակությունից և դրան կցված փաստաթղթերից:

26. Թերի (ոչ լրիվ) լրացված դիմումների դեպքում Հանձնաժողովի անդամն առաջարկում է Դիմորդին լրացնել դրանք:

27. Ներկայացված դիմումը չընդունելու կամ դիմումը և կից փաստաթղթերը վերադարձնելու դեպքում Դիմորդը կարող է Հանձնաժողովի գործողությունը (անգործությունը) բողոքարկել Խորհրդին՝ համապատասխանաբար դիմումը չընդունելու կամ փաստաթղթերը ստանալու օրվանից հաշված եռօրյա ժամկետում:

28. Խորհուրդը ստացված բողոքը քննարկում և որոշում է ընդունում ողջամիտ ժամկետում: Բողոքը բավարարելու մասին Խորհրդի որոշումը հիմք է Հանձնաժողովի համար Հավակնորդի դիմումը և կից փաստաթղթերն ընդունելու համար:

29. Սահմանված ժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն ընդունվում:

30. Հանձնաժողովը Ժամանակացույցով սահմանված ժամկետում իրականացնում է Դիմորդի ներկայացրած փաստաթղթերի և տվյալների հավաստիության ստուգում:

31. Ստուգումների արդյունքներով Հանձնաժողովն առանձին որոշում է ընդունում՝ Ընդունելության քննությանը Դիմորդի մասնակցությունը չթույլատրելու մասին, եթե՝

1) Դիմորդը դիմումին կից չի ներկայացրել Կարգի 23-րդ կետում նշված փաստաթղթերը,

2) դիմումում նշված տեղեկությունները կամ դիմումին կից ներկայացված փաստաթղթերն ամբողջությամբ կամ մասնակի կեղծ են:

32. Բացառիկ դեպքերում, եթե Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում Հանձնաժողովը չի ստանում Դիմորդի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ, ապա Հանձնաժողովն առանձին որոշում է ընդունում Ընդունելության քննությանը Դիմորդի մասնակցությունը թույլատրելու մասին պայմանով, որ պահանջված տեղեկությունների ստանալուց հետո և Ընդունելության քննությանը Դիմորդի մասնակցությունը

չթույլատրելու մասին հիմքերի բացահայտվելու դեպքում Հավակնորդը զրկվում է իր կարգավիճակից, Ընդունելության քննությանը մասնակցելու հնարավորությունից:

33. Կարգի 31-րդ կետով նախատեսված դեպքերից որևէ մեկի բացակայության դեպքում Հանձնաժողովը որոշում է ընդունում Ընդունելության քննությանը Դիմորդի մասնակցությունը թույլատրելու մասին:

34. Ընդունելության քննությանը Դիմորդի մասնակցությունը չթույլատրելու մասին որոշման ընդունման դեպքում ներկայացված դիմումը և դրան կից փաստաթղթերը Դիմորդին չեն վերադարձվում:

34.1 Կարգի 33-րդ կետերով նախատեսված որոշումը փակցվում է ՀՀ փաստաբանական դպրոցի վարչական շենքում՝ բոլորի համար տեսանելի վայրում կամ տեղադրվում է ՀՀ փաստաբանական դպրոցի պաշտոնական կայք էջում կամ ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայք էջում կամ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է Դիմորդին, Ունկնդրին՝ Ընդունելության քննության իր դիմումում նշված հասցեով:

(Լր. 08.08.2013թ. N 14), (Փոփ. 27.08.2013թ. N 15)

35. Կարգի 31-րդ և 32-րդ կետերով նախատեսված որոշումներն առձեռն հանձնվում են կամ փոստով՝ հետադարձ ծանուցմամբ, ուղարկվում են Դիմորդին՝ իր դիմումում նշված հասցեով:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

36. Ընդունելության քննությանը Դիմորդի մասնակցությունը թույլատրելու մասին Հանձնաժողովի որոշմամբ Դիմորդը ձեռք է բերում Հավակնորդի կարգավիճակ:

37. Ուժը կորցրել է:

(Փոփ. 27.08.2013թ. N 15)

38. Ուժը կորցրել է:

(Փոփ. 27.08.2013թ. N 15)

39. Ընդունելության քննությանը Դիմորդի մասնակցությունը չթույլատրելու մասին որոշումը Դիմորդը կարող է բողոքարկել Խորհրդին՝ որոշումը ստանալու պահից եռօրյա ժամկետում և (կամ) դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետում և կարգով:

40. Դիմորդը Խորհրդին իր բողոքը ներկայացնում է գրավոր ձևով: Դիմորդը բողոքը ներկայացնում է Խորհրդի նախագահի անվամբ, ուր նշում է՝

1) իր անունը, ազգանունը, բնակության վայրի հասցեն, էլեկտրոնային հասցեն և հեռախոսի համարը,

2) վիճարկվող որոշման ամսաթիվը և համառոտ բովանդակությունը,

3) հիմնավորումներ, թե ինչու է վիճարկում Հանձնաժողովի որոշումը,

4) իր բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը և թերթերի քանակը, դրանց առկայության դեպքում,

4.1) ստորագրում է բողոքը:

(Լր. 27.08.2013թ. N 15)

41. Հանձնաժողովը գրանցում է Դիմորդի բողոքը և տրամադրում կամ ուղարկում է բողոքը գրանցելու փաստը հաստատող ստացական:

42. Կարգի 40-րդ կետում նշված գրավոր բողոքի բովանդակությանն առաջադրվող պահանջը չպահպանելու դեպքում Խորհրդի նախագահը առանց նիստ գումարելու կարող է իր

որոշմամբ բողոքը վերադարձնել Դիմորդին՝ պարտադիր նշելով, թե Դիմորդը Կարգի որ պահանջը չի պահպանել: Դիմորդը կարող է Խորհրդի նախագահի որոշումն ստանալուց հետո եռօրյա ժամկետում շտկել թերությունները և կրկին դիմել Խորհրդին:

43. Կարգի 40-րդ կետի պահանջներին բավարարող բողոք ստանալու դեպքում Խորհրդի նախագահը Խորհրդի անդամներից նշանակում է զեկուցող: Որպես զեկուցող կարող է հանդես գալ նաև Խորհրդի նախագահը:

44. Խորհրդի նախագահը զեկուցողին է տրամադրում բողոքը և դրան կից ներկայացված փաստաթղթերը:

45. Խորհուրդը Հավակնորդի բողոքը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում բողոքի ստացման պահից տասնօրյա ժամկետում: Բացառիկ դեպքերում այդ ժամկետը կարող է Խորհրդի որոշմամբ երկարացվել:

46. Խորհրդի նախագահը պարտավոր է նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով (էլեկտրոնային փոստով) ծանուցել բողոք ներկայացրած անձին: Ժամանակին ծանուցված բողոք բերած անձի Խորհրդի նիստին չներկայանալը չի խոչընդոտում բողոքի քննությանը:

47. Խորհրդի նիստի ժամանակ զեկուցողը ներկայացնում է Դիմորդի բողոքի հիմնական փաստարկները և իրավական հիմնավորումները: Խորհրդի անդամները կարող են հարցեր տալ զեկուցողին, ինչպես նաև բողոքի քննարկմանը ներկա գտնվող բողոք ներկայացրած անձին:

48. Քննելով բողոքը՝ Խորհուրդը որոշում է՝

1) ներկայացրած բողոքը մերժելու և Հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին, կամ
2) ներկայացրած բողոքը բավարարելու և Հանձնաժողովի որոշումն անվավեր ճանաչելու մասին:

49. Խորհրդի որոշման կայացման ժամանակ Խորհրդի քննարկումներին մասնակցում են միայն Խորհրդի անդամները:

50. Խորհրդի որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է Խորհրդի նախագահի կողմից այն կայացնելուց անմիջապես հետո: Խորհրդի որոշումը բողոք բերած անձին տրամադրվում է ողջամիտ ժամկետում և ուժի մեջ է մտնում բողոք բերած անձի կողմից ստանալու պահից:

51. Եթե Խորհուրդը բավարարում է Դիմորդի բողոքը և վերացնում է Հանձնաժողովի՝ Ընդունելության քննությանը Դիմորդի մասնակցությունը չթույլատրելու մասին որոշումը, ապա Խորհրդի որոշումը հիմք է Դիմորդին որպես Հավակնորդ ճանաչելու և Ընդունելության քննությանը Դիմորդի մասնակցությունը թույլատրելու համար նույնիսկ այն պարագայում, եթե Ընդունելության քննությունն այդ պահին ավարտվել է: Եթե սույն կետով նախատեսված Խորհրդի որոշումն ընդունվել է Ընդունելության քննությունն ավարտվելուց հետո, ապա ՀՀ փաստաբանական դպրոցը պարտավոր է տվյալ Հավակնորդի համար կազմակերպել նոր Ընդունելության քննություն:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

VI. Ընդունելության քննության մասնակցության վճարը

52. Դիմորդներից գանձվում է Ընդունելության քննության մասնակցության վճար **(այսուհետև՝ Վճար)**՝ 35.000 (երեսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով:

53. Վճարումը կատարվում է անկանխիկ՝ ՀՀ փաստաբանական դպրոցի հաշվարկային հաշվին:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

54. Վճարից ազատվում են՝

1) առաջին և երկրորդ խմբի հաշմանդամները,
2) իրենց խնամքին անչափահաս երեխա ունեցող միայնակ ծնողները,
3) զոհված ազատամարտիկների զավակները:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

55. Կարգի 54-րդ կետում նշված հանգամանքները պետք է հիմնավորված լինեն համապատասխան փաստաթղթերով, և Դիմորդն այդ մասին պետք է նշում կատարի Ընդունելության քննության մասնակցության դիմումի համապատասխան մասում: Հանձնաժողովը քննության է առնում Դիմորդի՝ Վճարից ազատելու խնդրանքը և որոշում է կայացնում այն բավարարելու և Դիմորդին վճարից ազատելու կամ չբավարարելու մասին՝ սահմանված կարգով այդ մասին տեղեկացնելով Դիմորդին: Վճարից ազատելու խնդրանքը մերժելու դեպքում Հանձնաժողովը Դիմորդին պետք է տրամադրի լրացուցիչ եռօրյա ժամկետ՝ վճարում կատարելու համար: Եռօրյա ժամկետը հաշվարկվում է Դիմորդի կողմից համապատասխան որոշումը ստանալու պահից:

55.1 Մինչև Ընդունելության քննությունը Դիմորդը, Հավակնորդն իրավունք ունի դիմել Հանձնաժողովին՝ հետ ստանալու մինչ այդ ՀՀ փաստաբանական դպրոցին փոխանցված Վճարը: Հանձնաժողովը, ստանալով Դիմորդի, Հավակնորդի դիմումը, յոթ օրվա ընթացքում վերադարձնում է Վճարը:

(Լր. 08.08.2013թ. N 14)

55.2 Եթե Վճարը վերադարձվում է, ապա Դիմորդը, Հավակնորդն իրավունք չունի մասնակցելու տվյալ փուլի Ընդունելության քննությանը՝ բացառությամբ Կարգով նախատեսված ժամկետների պահպանմամբ վճարելուց հետո:

(Լր. 08.08.2013թ. N 14)

56. Ուժը կորցրել է:

(Փոփ. 22.02.2013թ. N 10), (Փոփ. 08.08.2013թ. N 14)

57. Ուժը կորցրել է:

(Փոփ. 22.02.2013թ. N 10), (Փոփ. 08.08.2013թ. N 14)

58. Ուժը կորցրել է:

(Լր. 22.02.2013թ. N 10), (Փոփ. 08.08.2013թ. N 14)

VII. Ընդունելության քննությունը

59. Ընդունելության քննությունն անցկացվում է հարցաշարերով (թեստավորման եղանակով):

60. Ընդունելության քննության անցկացման նպատակով կազմվում է մինչև 2.350 (երկու հազար երեք հարյուր հիսուն) հարցերից բաղկացած շտեմարան, որն ընդգրկում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքից՝ մինչև 600 (վեց հարյուր),

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության իրավունքից՝ մինչև 300 (երեք հարյուր),
3) Հայաստանի Հանրապետության քրեական իրավունքից՝ մինչև 600 (վեց հարյուր),
4) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունքից՝ մինչև 300 (երեք հարյուր),
5) Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքից՝ մինչև 100 (մեկ հարյուր),
6) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայից (ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներից)՝ մինչև 100 (մեկ հարյուր),
(Փոփ. 22.02.2013թ. N 10), (Փոփ. 08.08.2013թ. N 14)
7) Հայաստանի Հանրապետության վարչական իրավունքից՝ մինչև 150 (մեկ հարյուր հիսուն),
8) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության իրավունքից՝ մինչև 200 (երկու հարյուր) հարցեր:

61. Հարցաշարերում նշված յուրաքանչյուր հարց ունի 4 (չորս) այլընտրանքային պատասխաններ, որոնցից միայն մեկն է ճիշտ, իսկ մյուսները սխալ են կամ հարցաշարի ճիշտ պատասխանի համեմատությամբ՝ ոչ լիարժեք, որոնք նույնպես որակվում են որպես սխալ պատասխաններ:

62. Ճիշտ պատասխանը կարող է տառացի չհամընկնել նորմատիվ իրավական ակտի շարադրանքին: Այն դեպքում, երբ թեստավորման օրվա դրությամբ օրենսդրական փոփոխություններ են տեղի ունեցել համեմատած շտեմարանի հրապարակման օրվա դրությամբ, ապա Հավակնորդը պարտավոր է իր պատասխանները նշել ղեկավարվելով շտեմարանի հրապարակման օրվա դրությամբ գործող օրենսդրությամբ:

63. Ընդունելության քննության շտեմարանում առկա անճշգրտությունների և (կամ) առարկությունների (առաջարկությունների) վերաբերյալ Դիմորդները, Հավակնորդները և (կամ) շահագրգիռ անձինք կարող են դիմել Հանձնաժողովին՝ ուղարկելով էլեկտրոնային հաղորդագրություն info@advschool.am էլեկրտրոնային փոստին:
(Լր. 22.02.2013թ. N 10)

64. Հանձնաժողովը, ուսումնասիրելով անճշգրտությունները և (կամ) առարկությունները (առաջարկությունները), ոչ ուշ քան Ընդունելության քննությունից երեք օր առաջ ներկայացնում է ամփոփ տեղեկատվություն այն հարցերի վերաբերյալ, որոնք փոփոխվել և (կամ) հանվել են Ընդունելության քննության շտեմարանից:
(Լր. 22.02.2013թ. N 10)

VIII. Ընդունելության քննության գործընթացը

65. Ընդունելության քննության անցկացման օրը և ժամին Հավակնորդը պետք է ներկայանա Ընդունելության քննության համար սահմանված վայրը:
(Փոփ. 27.08.2013թ. N 15)

66. Հանձնաժողովը գրանցում է Հավակնորդին միայն իր անձը հաստատող փաստաթղթի (անձնագրի, զինվորական գրքույկի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի) առկայության դեպքում:

(Փոփ. 27.08.2013թ. N 15)

67. Գրանցվելու ժամանակ յուրաքանչյուր Հավակնորդ ստանում է համապատասխան թերթիկ, որի վրա նշված է Հավակնորդի անունը, հայրանունը, ազգանունը և համապատասխան համակարգչային ծածկանիշը (այսուհետև՝ Ծածկանիշը):

68. Քննության ժամանակ Հավակնորդին չի թույլատրվում՝

1) քննական սրահ տանել (մտցնել) որևէ նյութ, թուղթ, գրիչ, պայուսակ, ուտելիք, հեռահաղորդակցման և համակարգչային սարքեր, այդ թվում՝ բջջային հեռախոս, ձայնագրիչներ կամ այլ պարագաներ, բացառությամբ այն դեպքերի, երբ Հանձնաժողովի նախագահը հաշմանդամության կամ առողջական վիճակի հետ կապված խնդիրներ ունեցող Հավակնորդին հատուկ կարիքների համար թույլատրել է ուտելիք կամ այլ պարագաներ քննական սրահ տանել (մտցնել):
2) օգտագործել Ընդունելության քննության շտեմարան, նորմատիվ իրավական ակտեր, օրենքների մեկնաբանության գրքեր, դասագրքեր, նախապես կազմված գրառումներ կամ այլ նյութեր, այդ թվում՝ նման տեղեկություններ պարունակող կամ տրամադրող առուդիո և այլ տեխնիկական միջոցներ ու սարքավորումներ,
3) քննական սրահում և դրա հարակից տարածքներում այլ Հավակնորդի հետ խոսել կամ ժեստերով և (կամ) որևէ այլ կերպ հաղորդակցվել,
4) ծխելը կամ ծխելու պատրվակով դուրս գալը:

69. Կարգի 68-րդ կետի պահանջները խախտած Հավակնորդը հեռացվում է քննական սրահից և համարվում է Ընդունելության քննությունը չհանձնած: Հեռացման վերաբերյալ Հանձնաժողովը ընդունում է արձանագրային որոշում, որի քաղվածքը ողջամիտ ժամկետում տրամադրվում է Հավակնորդին:

70. Քննության ժամանակ Հավակնորդին տրամադրվում է քննության համար անհրաժեշտ պարագաներ, ինչպես նաև խմելու ջուր:

71. Քննության օրը՝ քննական տոմսում նշված գրանցման ժամն ավարտվելուց հետո, քննական սրահի մուտքի (ելքի) բոլոր դռները փակվում են և ուշացած Հավակնորդներին չի թույլատրվում մտնել քննական սրահ՝ անկախ ուշացման պատճառներից: Ընդունելության քննությունից ուշացած Հավակնորդը համարվում է Ընդունելության քննությանը չմասնակցած, որի վերաբերյալ Հանձնաժողովը ընդունում է արձանագրային որոշում, որի քաղվածքը ողջամիտ ժամկետում տրամադրվում է Հավակնորդին:

72. Հարգելի պատճառով (համապատասխան փաստաթղթի առկայությամբ) կամ անհաղթահարելի ուժի հետևանքով սահմանված ժամից ուշ ներկայացած կամ չներկայացած հավակնորդը դիմում է գրում Խորհրդին՝ խնդրելով հնարավորություն ընձեռել լրացուցիչ (ռեզերվային) օր հանձնելու ընդունելության քննությունը:

(Լր. 22.02.2013թ. N 10)

73. Լրացուցիչ (ռեզերվային) օր ընդունելության քննություն հանձնելու թույլտվության հարցը որոշում է Խորհուրդը:

(Լր. 22.02.2013թ. N 10)

74. Քննական սրահում Հավակնորդն իր ցանկությամբ զբաղեցնում է որևէ ազատ տեղ: Հանձնաժողովի նախագահի պահանջով Հավակնորդը պարտավոր է իր տեղը փոխել:

75. Հարցաշարը լրացնելուց առաջ Հանձնաժողովի անդամներից մեկը կամ համակարգչային օպերատորը Հավակնորդներին պարզաբանում է քննական

գործընթացը, այդ թվում՝ ժամանակի սահմանափակման, ինչպես նաև Ընդունելության քննությունը պատշաճ ձևով հանձնելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

76. Պարզաբանումներից անմիջապես հետո Հանձնաժողովի անդամը հայտարարում է Ընդունելության քննությունը սկսված: Ընդունելության քննության ժամանակը սկսվում է հաշվարկվել այդ պահից:

77. Հանձնաժողովի անդամի կողմից Ընդունելության քննության սկիզբը հայտարարելուց անմիջապես հետո համակարգչային օպերատորը միացնում է Ընդունելության քննության ծրագիրը: Յուրաքանչյուր համակարգչի վրա Ընդունելության քննության ծրագիրը գեներացնում է պատահական կարգով ընտրված 150 (մեկ հարյուր հիսուն) հարց: Ընդունելության քննության առավելագույն տևողությունը երեք ժամ է:

78. Հարցաշարի հարցերի պատասխանների տարբերակները կարող են դասավորվել տարբեր հաջորդականությամբ, և դրանք կարող են չհամընկնել շտեմարանում նշված հերթականությանը:

79. Հավակնորդներին հնարավորություն է տրվում ընտրելու Ընդունելության քննության հանձնման ուղղվածությունը՝ քաղաքացիական կամ քրեական իրավունքի բնագավառներում:

80. Հավակնորդի առաջին քայլը սկսվում է համակարգչի վրա ուղղվածության տարբերակն ընտրելու միջոցով: Հավակնորդի կողմից քրեական կամ քաղաքացիական ուղղվածության ընտրությունից հետո համակարգչային ծրագիրը կրկին հարցնում է ընտրության ճշտության մասին, և եթե Հավակնորդը հաստատում է, ապա համակարգչային ծրագիրը հարցերը գեներացնում է Հավակնորդի ընտրած ուղղվածությամբ: Ուղղվածությունն ընտրելուց հետո Հավակնորդը չի կարող այն փոխել՝ անկախ որևէ պատճառից:

(Փոփ. 27.08.2013թ. N 15)

81. Հավակնորդը պատասխանները նշում է էլեկտրոնային տարբերակով՝ մկնիկի միջոցով:

(Լր. 22.02.2013թ. N 10)

82. Քաղաքացիական ուղղվածությունն ընտրած Հավակնորդի հարցաշարում հարցերը բաշխվում են հետևյալ համամասնությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքից՝ 50 (հիսուն),
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության իրավունքից՝ 45 (քառասունհինգ),
3) Հայաստանի Հանրապետության քրեական իրավունքից՝ 10 (տասը),
4) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունքից՝ 15 (տասնհինգ),
5) Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքից՝ 5 (հինգ),
6) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայից (ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներից)՝ 5 (հինգ),

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

7) Հայաստանի Հանրապետության վարչական իրավունքից՝ 10 (տասը),
8) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության իրավունքից՝ 10 (տասը) հարցեր:

83. Քրեական ուղղվածությունն ընտրած Հավակնորդի հարցաշարում հարցերը բաշխվում են հետևյալ համամասնությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության քրեական իրավունքից՝ 50 (հիսուն),
2) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության իրավունքից՝ 45 (քառասունհինգ),
3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունքից՝ 10 (տասը),
4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության իրավունքից՝ 15 (տասնհինգ),
5) Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքից՝ 5 (հինգ),
6) «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայից (ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներից)՝ 5 (հինգ),

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

7) Հայաստանի Հանրապետության վարչական իրավունքից՝ 10 (տասը),
8) Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության իրավունքից՝ 10 (տասը) հարցեր:

84. Համակարգչային ծրագիրը հարցաշարը ներկայացնում է ըստ համապատասխան իրավունքի ճյուղի խմբերի:

85. Հավակնորդը հարցաշարի հարցերին պատասխանում է մկնիկով նշում կատարելու միջոցով: Համակարգչային ծրագիրը չի թույլատրում մեկ հարցի համար երկու պատասխան նշել: Հավակնորդը մինչև համակարգչային ծրագիրը փակելը կարող է իր ընտրած պատասխանների տարբերակները փոխել:

86. Ժամանակն ավարտվելուց հետո համակարգչային ծրագիրը Հավակնորդին տեղեկացնում է հատկացված ժամանակի և Ընդունելության քննության ավարտի մասին:

87. Հավակնորդը նշումները վերջացնելուց հետո պարտավոր է Ծածկաթերթում նշված ծածկագնիշը մուտքագրել համակարգչային ծրագրում: Հավակնորդը պարտավոր է ծածկանիշը մուտքագրել նաև այն դեպքում, երբ ժամանակի ավարտի պատճառով համակարգը փակել է ծրագիրը:

88. Ծածկանիշը չմուտքագրելու դեպքում համարվում է, որ Հավակնորդը չի հանձնել Ընդունելության քննությունը:

89. Ծածկանիշը մուտքագրելուց և հաստատելուց հետո Հավակնորդը կարող է համապատասխան համակարգչային էկրանի միջոցով տեղեկանալ իր ստացած միավորների մասին:

(Փոփ. 27.08.2013թ. N 15)

90. Հավակնորդը Ընդունելության քննության օրը կարող է ստանալ իր կողմից սխալ լուծած հարցերի օրինակը՝ թղթային տարբերակով:

91. Հավակնորդը կարող է դուրս գալ քննական սրահից բացառապես Հանձնաժողովի անդամներից կամ Դիտորդներից մեկի ուղեկցությամբ: Միաժամանակ երեքից ավելի Հավակնորդների չի թույլատրվում դուրս գալ քննական սրահից՝ բացառությամբ արտակարգ բնույթ կրող դեպքերի:

92. Եթե Դիտորդի կամ Հանձնաժողովի անդամի մոտ հիմնավոր կասկած է առաջանում, որ Հավակնորդն իր մոտ թաքցնում է Կարգի 68-րդ կետում նշված որևէ արգելված նյութ (առարկա), ապա Դիտորդը կարող է հրավիրել Հանձնաժողովի որևէ անդամի, իսկ

Հանձնաժողովի անդամը՝ Դիտորդի և նրա ներկայությամբ Հավակնորդից պահանջել ցույց տալու արգելված նյութը (առարկան): Եթե Հավակնորդը հրաժարվում է ցույց տալ իր գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը, ապա Հավակնորդը հեռացվում է Ընդունելության քննությունից և համարվում է, որ նա չի հանձնել Ընդունելության քննությունը: Սույն կետում նշված դեպքում Հանձնաժողովը ընդունում է արձանագրային որոշում, որի քաղվածքը ողջամիտ ժամկետում տրամադրվում է Հավակնորդին:

93. Հավակնորդի ցանկությամբ գրպանի կամ հագուստի այլ մասի (թաքստոցի) պարունակությունը կարող է ցույց տրվել նույն սեռի առնվազն երկու անձի (դիտորդի և (կամ) Հանձնաժողովի անդամի) ներկայությամբ՝ առանձին սենյակում:

94. Բացի Հանձնաժողովի անդամներից, Դիտորդներից, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներից և Հավակնորդներից այլ անձանց չի թույլատրվում ներկա գտնվել քննական սրահում:

95. Քննական սրահում զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել միայն Հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ:

96. Ընդունելության քննության ժամանակ ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց արգելվում է ցանկացած ձևով օգնել Հավակնորդներին: Դիտորդը չի կարող առանց Հանձնաժողովի անդամի ներկայության հաղորդակցվել Հավակնորդի հետ:

97. Հանձնաժողովի որոշմամբ քննությունների ընթացքը կարող է տեսանկարահանվել և (կամ) տեսաձայնագրվել:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

IX. Հավակնորդների պատասխանների ստուգման կարգը

98. Քննության ավարտից հետո թեստավորման արդյունքներն ամփոփելու նպատակով Հանձնաժողովը գումարում է նիստ:

99. Հանձնաժողովի որոշումը հայտարարվում է թեստավորման արդյունքներն ամփոփելուց անմիջապես հետո՝ փակցնելով այն ՀՀ փաստաբանական դպրոցում՝ բոլորի համար տեսանելի վայրում, տեղադրվում է ՀՀ փաստաբանական դպրոցի պաշտոնական կայք էջում կամ ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայք էջում կամ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է Հավակնորդին՝ Ընդունելության քննության իր դիմումում նշված հասցեով:

(Փոփ. 08.08.2013թ. N 14), (Լր. 27.08.2013թ. N 15)

100. Հարցաշարում նշված յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանի ընտրության համար Հավակնորդը ստանում է 1 (մեկ) միավոր: Հավակնորդի կողմից հարցաշարի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ ոչ մի պատասխան ընտրված (նշված) չլինելու դեպքում, Հավակնորդը ստանում է 0 (զրո) միավոր:

101. Տեխնիկական պատճառով (համակարգչի անսարքություն, էլեկտրական հոսանքի տատանում և այլն) ամփոփիչ արդյունքները չգրանցվելու դեպքում Հավակնորդին հնարավորություն է ընձեռվում վերստին հանձնելու Ընդունելության քննությունը, եթե տեխնիկական պատճառներն առաջացել են ոչ Հավակնորդի գործողությունների արդյունքում:

102. Կարգի 101-րդ կետում սահմանված դեպքում Հանձնաժողովի որոշմամբ Հավակնորդին հնարավորություն է տրվում նույն օրը վերստին հանձնել Ընդունելության քննություն: Եթե Հավակնորդը հրաժարվում է նույն օրը վերստին քննություն հանձնել, ապա գրավոր դիմում է Խորհրդին՝ խնդրելով քննության այլ (լրացուցիչ) օր նշանակել:

103. Ընդունելության քննության նվազագույն շեմը սահմանվում է 110 (մեկ հարյուր տասը) միավոր:

(Փոփ. 04.06.2013թ. N 13)

104. ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իրավունք է ստանում այն Հավակնորդը, ով հաղթահարել է Կարգով սահմանված Ընդունելության քննության նվազագույն շեմը և ընդգրկվել առավելագույն միավորներ հավաքած առաջին 60 (վաթսուն) տեղերում:

105. Եթե անցողիկ վերջին 60-րդ տեղին հավակնում են հավասար միավորներ ստացած մեկից ավելի Հավակնորդներ, ապա բոլոր այդ Հավակնորդները իրավունք են ստանում սովորելու ՀՀ փաստաբանական դպրոցում:

106. Եթե առավելագույն միավորներ հավաքած առաջին 60 (վաթսուն) տեղերում ընդգրկված ունկնդիրը չի վճարում ուսումնառության համար նախատեսված վճարը մինչև Խորհրդի կողմից սահմանված ժամկետը կամ դիմում է ներկայացնում ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին ուսումնառության ժամկետը հետաձգելու վերաբերյալ, բայց ոչ ավելի, քան մեկ տարով, ապա, ըստ ռոտացիոն սկզբունքի (միավորների աճման), ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իրավունք է ձեռք բերում այն ունկնդիրը, ով հաղթահարել է Ընդունելության քննության նվազագույն շեմը:

(Փոփ. 27.08.2013թ. N 15)

106.1 Եթե Ունկնդիրը Կարգի 106-րդ կետով նախատեսված դեպքում դիմում է ներկայացնում ուսումնառության ժամկետը հետաձգելու վերաբերյալ, ապա ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենը դրա վերաբերյալ որոշում է ընդունում: Եթե ուսումնառության ժամկետը հետաձգված Ունկնդիրը ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի որոշմամբ սահմանված ժամկետում ցանկանում է իրականացնել ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իր իրավունքը, ապա ուսումնառության ժամկետը հետաձգված Ունկնդիրը չի ազդում տվյալ հոսքի Ունկնդիրների քանակական կազմի վրա:

(Լր. 27.08.2013թ. N 15)

X. Քննության արդյունքների բողոքարկման կարգը

107. Համաձայն Կարգի՝ Հավակնորդը կարող է Ընդունելության քննության արդյունքները բողոքարկել Խորհրդին՝ Ընդունելության քննության արդյունքները հրապարակելուց հետո ոչ ուշ, քան 3 (երեք) օրվա ընթացքում և (կամ) դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և կարգով:

108. Հավակնորդը Խորհրդին իր բողոքը ներկայացնում է գրավոր ձևով: Հավակնորդը բողոքը ներկայացնում է Խորհրդի նախագահի անվամբ, ուր նշում է՝

1) իր անունը, ազգանունը, բնակության հասցեն, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը,
2) վիճարկվող հարցի բովանդակությունը և իր հիմնավորումները,
3) բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը և թերթերի քանակը՝ դրանց առկայության դեպքում,

3.1) ստորագրում է բողոքը:

109. Հանձնաժողովը գրանցում է Հավակնորդի կողմից ներկայացրած ցանկացած բողոք և տրամադրում կամ ուղարկում է բողոքը գրանցելու փաստը հաստատող ստացական:

110. Կարգի 108-րդ կետում նշված գրավոր բողոքի բովանդակությանն առաջադրվող պահանջը պահպանված չլինելու դեպքում Խորհրդի նախագահը առանց նիստ գումարելու կարող է իր որոշմամբ բողոքը վերադարձնել Հավակնորդին՝ պարտադիր նշելով, թե Հավակնորդը Կարգի որ պահանջը չի կատարել: Հավակնորդը կարող է Խորհրդի նախագահի որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում շտկել թերությունները և կրկին դիմել Խորհրդին:

111. Կարգի 108-րդ կետի պահանջներին բավարարող բողոք ստանալու դեպքում Խորհրդի նախագահը նշանակում է Խորհրդի անդամներից կամ Խորհրդի անդամ չհանդիսացող անձանցից զեկուցող:

112. Խորհրդի նախագահը զեկուցողին է տրամադրում բողոքը և դրան կից ներկայացված բոլոր փաստաթղթերը:

113. Զեկուցողը, ուսումնասիրելով բողոքը և դրան կից փաստաթղթերը, կազմում է եզրակացություն:

114. Զեկուցողի եզրակացության մեջ պետք է նշված լինի՝ երբ, որտեղ, ում կողմից է (անուն, ազգանուն, հայրանուն, կրթությունը, մասնագիտությունը, իսկ առկայության դեպքում նաև՝ գիտական աստիճանը և կոչումը) կազմվել եզրակացությունը: Թեստերի վիճարկման դեպքում զեկուցողի եզրակացության մեջ պետք է արտացոլված լինեն՝ վիճարկվող հարցերի և դրանց շտեմարանային պատասխանները, այն պատասխանը, որը ընտրել է բողոք բերած անձը և այն պատասխանը, որը, ըստ շտեմարանի, համարվել է ճիշտ պատասխան, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ բողոք բերած անձի հիմնավորումը, զեկուցողի հիմնավորումները և կարծիքը: Տեխնիկական անսարքության վերաբերյալ հարցի վիճարկման դեպքում զեկուցողի եզրակացության մեջ պետք է նշված լինեն՝ Հավակնորդի հիմնավորումները, զեկուցողի հիմնավորումները և կարծիքը:

115. Խորհուրդը Հավակնորդի բողոքը քննարկում և դրա վերաբերյալ որոշում է կայացնում բողոքի ստացման պահից տասնօրյա ժամկետում: Բացառիկ դեպքերում այդ ժամկետը կարող է Խորհրդի որոշմամբ երկարացվել:

116. Խորհրդի նախագահը պարտավոր է նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ձևով ծանուցել (էլեկտրոնային փոստով) բողոք ներկայացրած անձին: Ժամանակին ծանուցված բողոք բերած անձի՝ Խորհրդի նիստին չներկայանալը չի խոչընդոտում բողոքի քննմանը:

117. Խորհրդի նիստի ժամանակ զեկուցողը ներկայացնում է իր եզրակացությունը: Խորհրդի անդամները հարցեր կարող են ուղղել զեկուցողին և բողոքի քննարկմանը ներկա գտնվող բողոք ներկայացրած անձին:

118. Քննելով բողոքը՝ Խորհուրդը որոշում է՝

1) բավարարել բողոքը, եթե բողոքարկվող հարցերի՝ հօգուտ ունկնդրի լուծման դեպքում ունկնդիրը կընդգրկվի ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննության նվազագույն շեմը հաղթահարած և ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իրավունք ձեռք բերած անցած ցուցակում,
2) մերժել բողոքը, եթե բողոքարկվող որևէ հարցի՝ հօգուտ ունկնդրի չլուծման դեպքում կամ որևէ հարցի կամ բոլոր հարցերի՝ հօգուտ ունկնդրի լուծման դեպքում ունկնդիրը չի

ընդգրկվի ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննության նվազագույն շեմը հաղթահարած և ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իրավունք ձեռք բերած անցած ցուցակում:

(Փոփ. 25.09.2013թ. N 17)

119. Խորհրդի որոշման կայացման ժամանակ Խորհրդի քննարկումներին մասնակցում են միայն Խորհրդի անդամները:

120. Խորհրդի որոշման եզրափակիչ մասը հրապարակվում է Խորհրդի նախագահի կողմից այն կայացնելուց անմիջապես հետո: Խորհրդի որոշումը բողոք բերած անձին տրամադրվում է ողջամիտ ժամկետում և ուժի մեջ է մտնում բողոք բերած անձի կողմից այն ստանալու պահից:

121. Խորհրդի որոշմամբ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող է նոր զեկուցող նշանակվել:

(Փոփ. 25.09.2013թ. N 17)

122. Խորհրդի անդամ չհանդիսացող զեկուցողը բողոքը ուսումնասիրելու և եզրակացություն կազմելու համար վարձատրվում է ՀՀ փաստաբանական դպրոցի բյուջեից:

(Փոփ. 08.08.2013թ. N 14)

123. Ուժը կորցրել է:

(Փոփ. 25.09.2013թ. N 17)

124. Եթե բողոք ներկայացրած Հավակնորդը համարվում է ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իրավունք ստացած անձ, ապա Խորհրդի նման որոշումը չի ազդում այդ պահին ՀՀ փաստաբանական դպրոցում սովորելու իրավունք ստացած այլ անձանց վրա: Նույն կերպ լուծվում է նաև դատական ակտով վերականգնված Հավակնորդի դեպքում:

(Փոփ. 08.08.2013թ. N 14), (Փոփ. 25.09.2013թ. N 17)

XI. Եզրափակիչ դրույթներ

(Փոփ. 22.02.2013թ. N 10)

125. Կարգն ուժի մեջ է մտնում Խորհրդի կողմից հաստատվելու օրվան հաջորդող օրվանից և գործում է անժամկետ:

126. Կարգն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել 2012 թվականի նոյեմբերի 12-ին ընդունված ՀՀ փաստաբանական դպրոցի ընդունելության քննության կազմակերպման և հանձնման կարգը:

(Փոփ. 22.02.2013թ. N 10)

127. Կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել միայն Խորհրդի որոշմամբ:

128. Կարգի հետ կապված մեկնաբանությունները (պարզաբանումները) տրվում են Խորհրդի կողմից՝ վերջինիս նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի (բողոքի) հիման վրա: